ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 9/7

ք. Երևան 26 մայիսի 2022 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման կարգը (նոր խմբագրություն)՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2022 թ. մայիսի 26-ի N 9/7 որոշմամբ:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝
Հ. Վ. Հովհաննիսյան

_____
«26» մայիսի 2022 թ.

ԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ (ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Երևանի պետական համալսարանի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտական դասընթացներում հետազոտական աշխատանքի կատարման պայմանները:

2. Հետազոտական աշխատանքը նախատեսված է տվյալ դասընթացի շրջանակում հետազոտություն կատարելու ու ներկայացնելու համար: Այն նպատակ ունի խթանելու ուսանողի անհատական և/կամ խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստելու նրա մասնագիտական հմտությունների ու կարողությունների զարգացմանը: Հետազոտական աշխատանքն իրականացվում է դասընթացի տեսական կամ գործնական պարապմունքների համար նախատեսված ժամերին և ենթադրում է դասավանդող դասախոսի խորհրդատվություն:

3. Հետազոտական աշխատանք պարունակող մասնագիտական դասընթացների ցանկը սահմանում է կրթական ծրագրի ղեկավարը, և հաստատում է ստորաբաժանման (ֆակուլտետ, ինստիտուտ, կենտրոն) գիտական խորհուրդը:

Հաստատումից հետո այն ներառվում է համապատասխան կրթական ծրագրի մասնագրում: Բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերում այդ դասընթացները նվազագույնը երկուսն են, առավելագույնը՝ վեցը:

II. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

4. Հետազոտական աշխատանքը ներառվում է միայն մասնագիտական դասընթացներում:

5. Հետազոտական աշխատանքը մասնագիտական ոլորտին առնչվող, կիրառական կամ տեսական նշանակություն ունեցող ու գործնական խնդիրների լուծմանը միտված ինքնուրույն անհատական կամ խմբային հետազոտություն է: Այն անմիջականորեն առնչվում է տվյալ մասնագիտական դասընթացի առարկային ու խնդիրներին:

6. Հետազոտական աշխատանքը կատարվում է ուսանողի կամ ուսանողների խմբի (առավելագույնը՝ 4 ուսանող) կողմից՝ դասընթացը վարող դասախոսի ընդհանուր ղեկավարությամբ:

7. Հետազոտական աշխատանքը կատարվում է գիտական ու հետազոտական ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Աշխատանքի արդյունքում ստացված տվյալները վերլուծվում են, և արվում է համապատասխան եզրակացություն:

8. Հետազոտական աշխատանքը ներառում է.

1) դրված հիմնախնդրի ու հետազոտության նպատակի հստակ ներկայացում,
2) դիտարկվող հարցերի ու թեմաների վերաբերյալ գրականության հակիրճ վերլուծություն,
3) հետազոտական մեթոդի կամ մեթոդական համակազմի նկարագրություն,
4) տվյալների հավաքագրում՝ ըստ դրված խնդիրների,
5) ստացված արդյունքների (տվյալների) ներկայացում ու վերլուծություն,
6) եզրակացության ներկայացում,
7) գրականության ցանկ:

III. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

9. Դասընթացի շրջանակում կատարված հետազոտական աշխատանքի արդյունքը հաշվի է առնվում տվյալ դասընթացի արդյունարար գնահատականում որպես երկու ընթացիկ քննություններից մեկի գնահատական:

10. Հետազոտական աշխատանքը գնահատվում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային աշխատանքների կատարման արդյունքում: Վերջինիս դեպքում գնահատումն իրականացվում է դասախոսի կողմից ընտրված գնահատման մեթոդաբանությամբ:

11. Դասընթացի հետազոտական բաղադրիչի գնահատումը կատարվում է հետևյալ չափանիշներով.

1) հետազոտական թեմայի արդիականության հիմնավորում և կատարման ինքնուրույնություն,

2) ստացված արդյունքների հիմնավորվածություն ու հավաստիություն,

3) ստացված արդյունքների որակական և/կամ քանակական վերլուծություն,

4) աշխատանքի բանավոր ներկայացում,

5) համապատասխան եզրակացությունների առկայություն:

Հետազոտական աշխատանքում գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

12. Հետազոտական աշխատանքի գնահատումը դասընթացը վարող դասախոսի հայեցողությամբ կարող է իրականացվել այլ դասախոսների մասնակցությամբ:

13. Հետազոտական աշխատանքը գնահատելու համար ուսանողի կողմից այն բանավոր ներկայացնելը պարտադիր է:

IV. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

14. Հետազոտական աշխատանք ներառող դասընթացները բակալավրի կրթական ծրագրում կարող են իրականացվել առկա համակարգի 4-7-րդ կիսամյակներում (հեռակա ուսուցման դեպքում՝ մինչև 9-րդ կիսամյակ), իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ սկսած 1-ին կիսամյակից:

15. Հետազոտական աշխատանքի թեմաները դասախոսի կողմից հանձնարարվում են մինչև տվյալ կիսամյակի 3-րդ շաբաթվա ավարտը:

16. Խմբային հետազոտական աշխատանք կատարելու դեպքում խմբերի կազմը հաստատվում է դասախոսի կողմից մինչև յուրաքանչյուր կիսամյակի 3-րդ շաբաթվա ավարտը:

17. Հետազոտական աշխատանքը դասախոսին ներկայացվում է տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով՝ դասախոսի հայեցողությամբ և նրա կողմից սահմանված ժամկետում:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Սույն կարգի մեջ փոփոխություններն ու լրացումները կատարվում են ԵՊՀ գիտական խորհրդի կողմից ԵՊՀ կանոնադրությամբ և ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

19. Սույն կարգը հրապարակվում է ԵՊՀ պաշտոնական կայքում:

20. Սույն կարգն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կիրառման մեջ է դրվում 2022-2023 ուսումնական տարվանից: